ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 Թ. ՀՈՒԼԻՍ - 2021 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) Ի կատարումն ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 8-ի թիվ 1126-Ն որոշման՝ 1148. «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» բյուջետային ծրագրի 11005. «Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառման շրջանակներում կազմվել և ներկայացվել են դրամաշնորհի տրամադրման պայմանագրեր:
2) Կատարվել է ծրագրերի գանձապետական ծախսերի նախահաշիվների, պայմանագրերի քաղվածքների ներմուծում և փոփոխություն «CLIENT-TRESURY» համակարգում:
3) Կատարվել է ոլորտի կազմակերպությունների ամսական կամ ընթացիկ ֆինանսավորման հայտերի և հաշվետվությունների վերլուծություն, ֆինանսավորման հայտերի պատրաստում և ներկայացվել է փոխանցման:
4) Ընդունվել և ըստ անհրաժեշտության ներկայացվել է հաստատման համակարգի հաստատությունների փոփոխված նախահաշիվները, տարիֆիկացիաները, հաստիքային ցուցակները:
5) Հավաքագրվել, վերլուծվել է ոլորտում գործող կազմակերպությունների սաների, խմբերի, դրույքների նախնական և փաստացի տվյալները, ինչպես նաև իրականացված միջոցառումների շրջանակներում կատարված փաստացի ծախսերը համադրվել է պայմանագրերում առկա տվյալների հետ, ըստ անհրաժեշտության կատարվել է վերահաշվարկ:
6) Մասնակցել է ԿԳՄՍ նախարարության ենթակայության բյուջետային և ՄԺԾԾ հայտերի լրամշակմանը:
7) Կազմվել և սահմանված կարգով շրջանառության է ներկայացվել կառավարության որոշման նախագիծ «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:
8) Մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի մարտի 15-ի թիվ 308-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի քննարկումներին:

9) Ուսումնասիրվել է արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպություններից ստացված գրություններ, հայտեր և ըստ անհրաժեշտության կազմվել է համաձայնագրեր:
10) Մասնակցել է կրթության, գիտության ոլորտի բյուջետային գործընթացի շրջանակում տարեկան բյուջետային ոչ ֆինանսական չափորոշիչների մշակման աշխատանքների կազմակերպմանը:
11) Մասնակցել է Նախարարության համակարգում ֆինանսական կառավարման արդյունավետ համակարգերի առկայության, Նախարարության տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկություններին:
12) Այլ ընթացիկ աշխատանքներ՝ կազմվել է գրություններ, տրամադրվել է պահանջվող տեղեկատվություն, պատասխանվել է ստացված մի շարք գրությունների:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

05 հոկտեմբեր 2021 թ.